ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՌԻՉԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՌԻՉԱՐԴ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՌՆԻԱ, ԱՄՆ

1700-ամեայ Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, հոգեւոր կենտրոնից համայն հայութեան, բերկրանօք սրտի Հայրապետական Մեր ողջոյնն ու սրտաբուխ շնորհաւորանքներն ենք բերում Ձեզ գիտամանկավարժական գործունէութեան 40-ամեայ տարեդարձի առիթով: Մենք անչափ ուրախ ենք, որ Ձեր յոբելեանը արժանաւորապէս նշւում է Հայ Կրթական Հիմնարկութեան կողմից կազմակերպուած մեծարման հանդիսութեամբ: Արդարեւ, Ձեր կեանքի յոբելեանական այս հանգրուանը Դուք դիմաւորում էք ծանրաբեռն, անխոնջ պատմաբանի ու նուիրեալ մանկավարժի բազմարդիւն վաստակով՝ ճանաչուած միջազգային ասպարէզներում, սիրուած հանուր մեր ժողովրդից եւ գնահատուած հայրենի պետութեան ու Մայր Եկեղեցու կողմից, որոնց Ձեր աստուածօրհնեալ կեանքի ողջ ընթացքին ծառայել էք անձնուիրաբար, ընծայել Ձեր հոգու ու մտքի կարողութիւնները եւ անկեղծ ու անմնացորդ սէրը:

Ձեր անունը քաջածանօթ է Հայրենիքում եւ ի սփիւռս աշխարհի բնակեալ հայորդիներին, որոնցից շատերի սրտերում ու հոգիներում Ձեր աշխատասիրութիւններն ու դասախօսութիւնները տարիներ շարունակ զօրացրել են հայրենանուիրութեան ու ազգասիրութեան ոգին, քաջալերել, նախանձախնդրօրէն պահպանել մեր ժողովրդի թանկ յիշատակներն ու աւանդները եւ զինուորագրուել Հայրենիքի ազատութեան եւ անկախութեան վերականգման սրբազան գործին:

Այսօր, գոհութիւն Աստուծոյ, երջանիկ ենք Մենք, որ տեսանք մեր ժողովրդի դարաւոր երազների իրականացումը՝ վերահաստատումը Հայաստանի անկախ պետականութեան: Մեր ժողովրդի ու հայոց պետութեան պատմութեանը, դարերով կերտուած Քրիստոսադրոշմ հայ մշակոյթին բազում հայ եւ այլազգի ուսանողներ են ծանօթանում Կալիֆոռնիայի Լոս Անջելէս համալսարանի Հայագիտական ամբիոնի 40-ամեայ շնորհակալ գործունէութեամբ, ուր Դուք երախտարժան ներդրում ու վաստակ ունէք:

Առաւելաբար գնահատելի են Ձեր ջանքերը՝ ի խնդիր Մեծ եղեռնի միջազգայնօրէն ճանաչման ու դատապարտման: Բազմաթիւ գրքերով ու հրապարակումներով, կազմակերպած գիտաժողովներով Դուք գիտական ու հասարակական լայն շրջա-

նակներին ներկայացրել էք դարասկզբին մեր ժողովրդի նկատմամբ իրականացուած ոճիրի իրականութիւնը, նպաստելով, որ բազմաթիւ ոչ հայ պատմաբաններ եւս խորամուխ լինեն խնդրի իսկութեան մէջ:

Սիրելի պրն Յովհաննիսեան, քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակելու 1700-ամեակի յոբելեանական այս տարում նորոգեալ ու լաւատեսութեամբ լեցուն հոգով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից առանձնակի ուրախութեամբ յղում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենախնամ Աստուած, որ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն, ստեղծագործական նոր ներշնչանքներ, աւիւն ու կորով, որով շարունակէք գիտամանկավարժական Ձեր գործունէութիւնը եւ Ձեր անսակարկ սպասաւորութիւնը մեր ժողովրդին, Հայրենի նորանկախ երկրին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 18-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2001 եւ ի թուին հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 64